ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/22

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մարտիրոսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 23.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է «Մառք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ճանաչել անբավարար, կասեցնել գնման գործընթացը, տվյալ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 23.03.2021թ.-ին:

24.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/22 համարի ծածկագիրը:

31.03.2021թ.-ին և 16.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 31.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.04.2021թ.-ին:

2. <u>«Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ն 23.03.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ 2021 թվականի մարտի 05-ի «1» որոշմամբ և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն Պատվիրատուն՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն որը գտնվում է ք. Երևան Զ. Անդրանիկի փող. 1 հասցեում, հայտարարել է գնանշման հարցում, որն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Գնանշման հարցման ծածկագիրը՝ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/08»:

«Մադրիա Պրոեկտ» ՍՊ Ընկերությունը մասնակցել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կարիքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռք բերման նպատակով հայտարարված գնանշման հարցման «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով հրավերին: Մեր ընկերության կողմից 12.03.2021թ. ժամը 10:53-ին ներբեռնվել է մրցույթի փաթեթը: Հայտերի բացումը տեղի է ունեցել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն

հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 11:00-ին (12.03.2021թ.):

Գնանշման հարցման փաթեթում առկա չի եղել փորձաքննության ենթակա աշխատանքների ծավալը: 08.03.2021թ. դիմել ենք գնահատող հանձնաժողովի քարտուղար Դավիթ Գասպարյանին ստացել նրանից փորձաքննության ենթակա նախագծի տեխնիկական պայմանները, որոնց հիման վրա հնարավոր չէ լիարժեք պատկերացնել աշխատանքների ծավալը և սահմանել հստակ գնային առաջարկ: 10.03.2021թ. 13:27 էլեկտրոնային փոստի միջոցով ստացել ենք շինարարական և էլեկտրական բաժինների տեխնիկական պայմաններն այն հիմնավորումով, որ դեռևս չունեն փորձաքննությանը ենթակա աշխատանքների պրոեկտը: Նշենք, որ տեխնիկական պայմանների փաթեթը չի հանդիսանում փորձաքննության կատարման համար լիարժեք և վերջնական փաթեթ: Մեր ընկերության կողմից ներկայացվել է գնառաջարկ, հիմք ընդունելով մեր մասնագետների արդեն իսկ, նախկինում կատարված «Ագարակ» և «Շինուհայր» ենթակայանների պրոեկտին մասնակից, հետևաբար նաև ծանոթ լինելու փաստը: Սակայն, դա նույնպես բավարար չէ հստակ գնառաջարկ ձևավորելու համար, քանի որ տվյալ պրոեկտի համար հայտատրարվել է թերությունների շտկման և փաստաթղթերի ՀՀ օրենքին համապատասխանեցման մրցույթ, որը նույնպես կազմակերպվել է թերի (չեն ներկայացվել շտկման ենթակա սխալների ծավալները): Ուստի հարց է ծագում անհրաժեշտ է իրականացնել ամբողջ փաթեթի, թէ միայն նախագծի շտկված մասի փորձաքննություն:

12.03.2021թ. ժամը 14:53-ին ստացել ենք հայտերի բացման արձանագրություն (արձանագրություն 2), իսկ 14:54-ին գնիջեցման բանակցությունների մասնակցության հրավերի ծանուցում: Նշեմ, որ գնման գործընթացը կազմակերպած էր «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, այդ իսկ պատճառով մասնակից 3 ընկերությունները հրավիրվել են գնիջեցման բանակցությունների, որոնց մասնակցել են միայն 2 ընկերություն «Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ն և «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ն: «ՄԱՌՔ» ՍՊԸ-ն բանակցություններին չի ներկայացել:

16.03.2021թ. նախատեսված ժամից 12:00-ից, 7 րոպե ուշացումով կայացել է հանդիպում, 20 րոպե տևողությամբ, հրավիրված մասնակիցների հետ, ք. Երևան Զ. Անդրանիկի փ. 1 հասցեում: Գնային առաջարկ ներկայացրած երեք մասնակիցներից ներկա էին երկուսը «Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ն և «Քաղաքաշինականծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ն: «ՄԱՌՔ» ՍՊԸ-ն բանակցություններին չի ներկայացել:

Համաձայն սույն հրավերի 8.7 կետի Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Նշեմ, որ չնայած մասնակիցներից մեկի բացակայությանը, նիստը չի կասեցվել, այսինքն բանակցություններն ընթացել են օրենքի խախտումով: Միևնույն ժամանակ, համաձայն նույն կետի «է» ենթակետի բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած: Ներկա մասնակից ընկերությունները չեն վերանայել գնման հայտով ներկայացված իրենց գնառաջարկները, սակայն տվյալ գնման ընթացակարգը չկայացած չի համարվել:

Հայտնում եմ նաև, որ «ՄԱՌՔ» ՍՊ Ընկերության հայտը ներկայացվել է թերի, սակայն ճանաչվել է բավարար, ինչը նույնպես համարվում է «Գնումների մասին» օրենքի խախտում և ենթակա է քննման բողոքները քննող անձի կողմից: Տվյալ ընկերության կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում, որպես տնօրեն նշված է մեկ անձ, սակայն էլեկտրոնային ստորագրությունը մեկ այլ անձի է, որը լիազորված չէ: Հայտի փաթեթում

բացակայում է լիազորագիրը, ինչը օրենքով ենթակա է շտկման մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սակայն փաթեթը չի շտկվել, ինչն էլ հիմք է հանդիսանում հայտը անբավարար ճանաչելու և «ՄԱՌՔ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար: Ներկայացված թերություններն անտեսվել են, և «ՄԱՌՔ» ՍՊԸ-ին առաջարկվել է կնքել պայմանագիր, որպես ամենացածր գնառաջարկ տված մասնակցի:

18.03.2021թ. ժամը 14:42 ստացել ենք «արձանագրություն 3» ծանուցումը, որտեղ նշվում է, որ մասնակիցների կողմից գնիջեցում չի կատարվել: Նույն օրը ժամը 15:17-ին ստացել ենք «ՄԱՌՔ» ՍՊԸ-ին որպես հաղթող մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու առաջարկի մասին որոշման ծանուցումը:»:

Ելնելով վերոգրյալից, «Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է «Մառք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ճանաչել անբավարար, կասեցնել գնման գործընթացը, տվյալ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընկերությունը 30.03.2021թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի պատասխան «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 29.03.2021թ.-ի № 01/24.1/773-2021 գրության հայտնում եմ.

Գնանշման հարցման փաթեթում առկա չի եղել փորձաքննության ենթակա աշխատանքների ծավալը: 08.03.2021թ. դիմել ենք գնահատող հանձնաժողովի քարտուղար Դավիթ Գասպարյանին ստացել նրանից փորձաքննության ենթակա նախագծի տեխնիկական պայմանները, որոնց հիման վրա հնարավոր չէ լիարժեք պատկերացնել աշխատանքների ծավալը և սահմանել հստակ գնային առաջարկ: 10.03.2021թ. 15:27 էլեկտրոնային փոստի միջոցով ստացել ենք շինարարական և էլեկտրական բաժինների տեխնիկական պայմաններն այն հիմնավորումով, որ դեռևս չունեն փորձաքննությանը ենթակա աշխատանքների պրոեկտը (կից ներկայացնում ենք նամակի սկրին տարբերակը): Մեզ փաստաթղթերը տրամադրելուց հետո (էլփոստով), վերոնշյալ տեխնիկական պայմանների փաթեթը ավելացվել է նաև մրցույթի հրավերի փաթեթի մեջ Արմեփս համակարգում: Սակայն, ինչպես նշել էինք, տեխնիկական պայմանների փաթեթը չի հանդիսանում փորձաքննության կատարման համար լիարժեք և վերջնական փաթեթ: Մեր ընկերության կողմից ներկայացվել է գնառաջարկ, հիմք ընդունելով մեր մասնագետների արդեն իսկ, նախկինում կատարված «Ագարակ» և «Շինուհայր» ենթակայանների

պրոեկտին մասնակից, հետևաբար նաև ծանոթ լինելու փաստը: Սակայն, դա նույնպես բավարար չէ հստակ գնառաջարկ ձևավորելու համար, քանի որ տվյալ պրոեկտի համար հայտարարվել է թերությունների շտկման և փաստաթղթերի ՀՀ օրենքին համապատասխանեցման մրցույթ, ուստի հարց է ծագում անհրաժեշտ է իրականացնել ամբողջ փաթեթի, թէ միայն նախագծի շտկված մասի փորձաքննություն:

Ինչպես երևում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշմանը կից փաթեթից, «ՄԱՌՔ» ՍՊ Ընկերության կողմից ներկայացված հավելված N1-ում, որպես շահառու նշված է «Տաթևիկ Հակոբյան Գուրգենի», իսկ որպես տնօրեն «Գուրգեն Հակոբյան»: Սակայն փաթեթում առկա չէ Տաթևիկ Հակոբյանի կողմից Գուրգեն Հակոբյանին տրվելիք լիազորագիրը, որով նա կլիազորեր վերջինիս հրավերի փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու: Ինչպես հայտնի է, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, նման թերությունն ենթակա է շտկման մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սակայն շտկում չի կատարվել, ինչը հստակ երևում է նաև «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշմանը կից փաթեթից:»:

Ընկերությունը 31.03.2021թ.-ին ներկայացրած մեկ այլ գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի պատասխան ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 31.03.2021թ-ի ժամը 13:45-ին կայացած ԳԲՔԱ-ԼՕ-2021/22 նիստի նշեմ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կարիքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռք բերման նպատակով հայտարարված գնանշման հարցման «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով հրավերի մեջ ամենևին էլ ներկայացված չէ, որ այն հանդիսանում է նախկինում կատարված նախագծերի ճշգրտված ծավալների փորձաքննության ծառայությունների ձեռք բերման նպատակով հայտարարված գնանշման հարցում: Առավել ևս, որ ներկայացվել է ամբողջական ծավալների տեխնիկական պայմանները և բնութագրերը, որի հիման վրա, առանց նախագծերի փաթեթի առկայության, այնուամենայնիվ, հնարավոր չէ հասկանալ հստակ ծավալ, այն է շինարարական, էլեկտրական և ռելեական բաժինների փորձաքննության ենթակա հատորների թերթերի քանակ), այլ ոչ թե կոնկրետ նախագծի ճշտգրտված մասի: Ուստի հարց է ծագում անհրաժեշտ է իրականացնել ամբողջ փաթեթի, թե միայն նախագծի ճշգրտված մասի փորձաքննություն: Այդ մասին տեղեկատվություն չի տրամադրվել: Իսկ ռազմավարական նշանակությունը անհրաժեշտ փաթեթի տրամադրման

հետ ոչ մի առընչություն չունի: Քանի որ բազմիցս նման փաթեթ պրամադրվել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից: Ինչ վերաբերվում է 3.100.000 դրամ (երեք միլիոն մեկ հարյուր հազար) նախագծի ճշգրտման արժեքին, հարկ եմ համարում նշել, որ նույնիսկ այս դեմքում կա անհամապատասխանություն: Քանի որ գոյություն ունի գնագոյացման սանդղակ, ըստ որի փորձաքննության ենթակա աշխատանքների արժեքը չի կարող գերազանցել նախագծային արժեքի 10%-ը: Այսինքն, առավելագույն արժեքը այս դեպքում կկազմեր ընդհամեը 310.000 (երեք հարյուր տասը հազար) դրամ:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված մասնակիցը նշեց, որ իր մոտ առկա է պետական միասնական գրանցամատյանի քաղվածքի վկայականի պատճենը: Նշեմ, որ այդ փաստաթուղթը չի կցվում հայտի փաթեթին, ուստի, որպես փոխարինող փաստաթուղթ ներկայացվում է լիազորագիր: Ինչպես երևում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշմանը կից փաթեթից, «ՄԱՌՔ» ՍՊ Ընկերության կողմից ներկայացված հավելված N1-ում, որպես շահառու նշված է «Տաթեիկ Հակոբյան Գուրգենի», իսկ որպես տնօրեն «Գուրգեն Հակոբյան»: Սակայն փաթեթում առկա չէ Տաթեիկ Հակոբյանի կողմից Գուրգեն Հակոբյանին տրվելիք լիազորագիրը, որով նա կլիազորեր վերջինիս հրավերի փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու: Ինչպես հայտնի է, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, նման թերությունն ենթակա է շտկման մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սակայն շտկում չի կատարվել, ինչը հստակ երևում է նաև «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշմանը կից փաթեթից:»:

3. <u>«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 25.03.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/4425-2021 գրությամբ դիմել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 23.03.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 30.03.2021թ.-ին թիվ 01/24.1/773-2021 գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ, տրամադրելով բողոքի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2021թ. մարտի 25-ի N Մ-1142-2021 գրության (այսուհետ՝ Գրություն)՝ հայտնում եմ, որ «Բարձրավոլտ էլեկտրաէներգետիկա» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով 2021թ. մարտի 5-ին կազմակերպվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին սահմանված կարգով հայտ են ներկայացրել երեք մասնակիցներ:

Հաշվի առնելով, որ Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ կետի 6-րդ ենթակետի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ (այսուհետ՝ Որոշում) հայտ ներկայացրած բոլոր մասնակիցները 2021թ. մարտի 16-ին ժամը 12:00-ին հրավիրվել են գների նվազեցման շուրջ վարվող միաժամանակյա բանակցություններին:

Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցներից բանակցություններին չի ներկայացել միայն մասնակցության հայտով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Մառք» ՍՊ ընկերությունը: Մյուս մասնակիցները սահմանված ժամին ներկայացել են բանակցություններին, սակայն վերջիններից որևէ մեկը չի նվազեցրել իր կողմից մուտքագրության հայտով ներկայացրած գնային առաջարկը, որի արդյունքում էլ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Մառք» ՍՊ ընկերությունը ճանաչվել է հաղթող մասնակից:

Ինչ վերաբերում է Գրության առաջին մասում բարձրացված հարցին՝ «Չնայած մասնակիցներից մեկի բացակայությանը, նիստը չի կասեցվել, այսինքն բանակցություններն ընթացել են օրենքի խախտումով», հայտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջնորդվել է Որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետով, այն է՝ «հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած

գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հայտնում եմ, որ Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 2021թ. մարտի 12-ին ժամը 11:00-ին, և քանի որ Ընթացակարգը կազմակերպված է եղել գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով, իսկ մասնակիցներից որևէ մեկը հայտերի բացմանը ներկա չի եղել, ուստի հանձնաժողովը որոշել է հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին օրենքով սահմանված ժամկետում և կարգով հրավիրել գների նվազեցման շուրջ վարվող միաժամանակյա բանակցությունների, իսկ հրավիրված բանակցություններին որևէ մասնակցի բացակայությունը հիմք չի կարող հանդիսանալ նրա կողմից ներկայացված հայտի մերժմանը:

Գրության երկրորդ մասի հետ կապված հայտնում եմ, որ Ընթացակարգի հրավերով սահմանված է եղել պահանջ, որ մասնակիցները պետք է ներկայացնեին հրավերով

սահմանված մասնակցության դիմումը՝ «Հավելված N 1», որտեղ ի թիվս այլ տվյալների՝ ներկայացվում է նաև հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ»: Վերոնշյալ հավելվածը ներկայացրել են բոլոր մասնակիցները՝ այդ թվում «Մառք» ՍՊ ընկերությունը, որի իրական շահառուն եղել է այլ անձ, իսկ տնօրեն՝ այլ անձ, և ներկայացված բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են եղել «Մառք» ՍՊ ընկերության տնօրենի կողմից:

Գրության երրորդ մասի հետ կապված հայտնում եմ, որ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման տեխնիկական բնութագրերը ամբողջությամբ հրապարակված են եղել Ընթացակարգի հրավերին կից ներկայացված փաստաթղթերում: Ինչ վերաբերում է «Մառք» ՍՊ ընկերության կողմից գնառաջարկի ձևավորման հիմնավորմանը՝ հայտնում եմ, որ Որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում»:

Հիմք ընդունելով վերոնշյալ հանգամանքները՝ հայտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ամբողջությամբ պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթները և պահանջները, և հետևաբար չկա որևէ հիմք՝ մերժելու «Մառք» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը, կամ Ընթացակարգը հայտարարել չկայացած:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով 05.03.2021թ.-ին հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 12.03.2021թ.-ին:

iii. Ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասին հիման վրա:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ն, «Մառք» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից) և «Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ն:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.03.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որոշել է գնային առաջարկների նվազեցման նպատակով հրավիրել միաժամանակյա բանակցություններ՝ 16.03.2021թ.-ին ժամը 12:00-ին:

vi. Հանձնաժողովի 16.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ միաժամանակյա բանակցություններին մասնակցել են «Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ի և «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ի ներկայացուցիչները, սակայն վերջիններիս կողմից նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչվել «Մառք» ՍՊԸ-ն՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

viii. www.gnumner.am համացանցային կայքում 19.03.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

ix. «Մառք» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ ներկայացրել է Տաթևիկ Գուրգենի Հակոբյանի տվյալները՝ որպես հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալներ, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի

կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

x. «Մառք» ՍՊԸ-ի կողմից, հայտով ներկայացված փաստաթղթերում՝ որպես ընկերության տնօրեն նշվել է Գուրգեն Հակոբյանի անուն ազգանունը, որի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել են թիվ 1 և թիվ 2 հավելվածները:

xi. «Մառք» ՍՊԸ-ն չի ներկայացել 16.03.2021թ.-ին ժամը 12:00-ին Պատվիրատուի կողմից հրավիրված միաժամանակյա բանակցություններին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 23.03.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պայմանագրի գնման առարկայի բնութագրերի, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջների մասով բողոք կարող է ներկայացվել մինչև հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետը, ուստի և Բողոքներ քննող անձի քննությանն ենթակա են միայն այն բողոքները, որոնք ներկայացվում են մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով 05.03.2021թ.-ին հայտարարված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 12.03.2021թ.-ին ժամը 11:00-ը ներառյալ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ինչպես նաև ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերն ու ներկայացված բողոքի փաստական և իրավական հիմքերը, թույլ է տալիս եզրակացնել, որ «Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը՝ փորձաքննության ենթակա աշխատանքների ծավալի հրավերում առկա չլինելու փաստի մասով, ներկայացվել է Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետների խախտմամբ, քանի որ բողոքով ներկայացված գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթների խախտման հանգամանքները վերաբերում են ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին, որպիսի պարագայում Ընկերությունը, այդ մասով, բողոք պետք է ներկայացներ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Բողոքաբերն իր ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնման համար կարող էր բողոք ներկայացնել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին մինչև «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով 05.03.2021թ.-ին հայտարարված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը, ուստի, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ բողոքն այս մասով անհիմն է և ենթակա է մերժման:

Անդրադառնալով Պատվիրատուի կողմից 16.03.2021թ.-ին ժամը 12:00-ին գների նվազեցման նպատակով հրավիրված միաժամանակյա բանակցությունները խախտմամբ անցկացնելու վերաբերյալ Ընկերության կողմից բողոքում նշված հիմքերին և հիմնավորումներին, Բողոքներ քննող անձը փաստում է հետևյալը.

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային

պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով 05.03.2021թ.-ին հայտարարված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների

հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու կամ վերջիններիս ներկայացուցիչների՝ բանակցություններին մասնակցելու (բանակցություններ վարելու) իրավասությամբ օժտված չլինելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որոշել է գնային առաջարկների նվազեցման նպատակով հրավիրել միաժամանակյա բանակցություններ՝ 16.03.2021թ.-ին ժամը 12:00-ին: Բանակցություններին մասնակցել են «Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ի և «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ի ներկայացուցիչները, իսկ «Մառք» ՍՊԸ-ն՝ չի ներկայացել բանակցություններին, սակայն ճանաչվել է ընտրված մասնակից, քանի որ ներկայացրել էր նվազագույն գնային առաջարկ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ՝ պահպանելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Հրավերի 8.7 կետով սահմանված պահանջները, քանի որ վերոնշյալ իրավական ներմերով նախատեսված չէ որևէ դրույթ այն մասին, որ մասնակիցներից որևէ մեկի բացակայության պայմաններում Հանձնաժողովը իրավասու չէ անցկացնելու բանակցություններ, այն որ պարտադիր պայման է հանդիսանում բոլոր մասնակիցների միաժամանակյա մասնակցությունը բանակցություններին: Բանակցություններին մասնակցելը մասնակցի իրավունք է, այլ ոչ թե պարտականությունը:

Ուստի, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ բողոքն այս մասով նույնպես անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքում նշված այն հանգամանքին, որ «Մառք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 1 հավելվածում, որպես տնօրեն նշված է մեկ անձ, սակայն հայտով ներկայացված փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրվել է մեկ այլ անձի կողմից, որը չի ունեցել այդ փաստաթղթերը ստորագրելու լիազորություն, ապա Բողոքներ քննող անձն փաստում է հետևյալը.

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնման

դեպքերում սույն պարբերությամբ նախատեսված ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի չափին, իսկ գնային առաջարկը գնման հայտով սահմանված ծառայության ձեռքբերման նախահաշվային արժեքից, որը հրապարակվում է հրավերով, պակաս լինելու դեպքում՝ նախահաշվային արժեքին: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում, ապահովման գործողության ժամկետը չպետք է պակաս լինի կնքվելիք պայմանագրով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման վերջնաժամկետից, ներառյալ՝ պայմանագրի կատարման արդյունքի ընդունման համար սահմանված ժամկետը, և ներկայացվում է օրենքի 35-րդ կետով սահմանված կարգով: Սույն պարբերությամբ նախատեսված կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովումը պահվում է լիազորված մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում,

դ. գնային առաջարկ,

ե. հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ,

զ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

է. հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,

ը. հայտարարություն՝ տվյալ գնման գործընթացում իրեն, սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության մասին,

թ. այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է...:

Հրավերի 4.3-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին.

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի

միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Մառք» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ ներկայացրել է Տաթևիկ Գուրգենի Հակոբյանի տվյալները՝ որպես հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալներ, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը բավարար գնահատելով «Մառք» ՍՊԸ-ի հայտը գործել է իրավաչափ՝ պահպանելով Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները, քանի որ ընկերության կողմից թիվ 1 հավելվածով ներկայացված Տաթևիկ Գուրգենի Հակոբյանը՝ հանդիսանում է որպես իրական շահառու՝ այլ ոչ ընկերության տնօրեն, իսկ «Մառք» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում որպես ընկերության տնօրեն նշվել է Գուրգեն Հակոբյանի անուն ազգանունը, որի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել են թիվ 1 և թիվ 2 հավելվածները:

Բացի այդ, բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ «Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից բողոքով չի ներկայացվել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ Գուրգեն

Հակոբյանը չի հանդիսանում «Մառք» ՍՊԸ-ի տնօրենը, ուստի իրավասություն չուներ ստորագրելու ընկերության անունից ներկայացված փաստաթղթերը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն այս մասով նույնպես անհիմն է և ենթակա է մերժման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով 05.03.2021թ.-ին հայտարարված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/08» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, կայացնելով «Մառք» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում, գործել է իրավաչափ, որպիսի պայմաններում Ընկերության կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մադրիա Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 23.03.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/22 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**